

ւելի բեռնաւորած են նաւերդ ագահու-
թիւք քան թէ դառնալու ատենի բեռնե-
րովդ: Երանի թէ Իտալիոյ ագահու-
թիւնը Աղեքսանդրիայի կերպասներուն
ծանրութեանը չափ ըլլար. անոնք քա-
նի մը նաւ կը լեցընեն, իսկ մեր ագա-
հութիւնը նաւատորմիդներ. մեր ագա-
հութեանը ոչ աշխարհքիս նախատին-
քը և ոչ մահուան երկիւղը կրնան յաղ-
թել: Կեանքդ վտանգի կը դնես՝ հարըս-
տութիւն ստանալու համար, ու մա-
հուանդ ատեն հարստութեան անուն
ձգելու. բայց չես գիտեր որ անանկ ա-
նունը, հարբուս եղովներու՝ որ ամե-
նեւին հոտ չեն զգար՝ անուշահոտ եղ
հոտւորտացնել կը նմանի, բայտասան ան-
զգայից, արուսեակ կուրաց, նուազա-
րան խուլերու: Չես գիտեր որ հարըս-
տութեամբդ՝ դրացիներուդ նախանձը
կը գրգռես, աւազակները կարծրնցը-
նես, կեանքդ կը վտանգես, անուանդ
կը փնասես, զաւկներուդ իրարու հետ
վիճելու՝ ու ժառանգներուդ քեզ անի-
ծելու պատճառ կու տաս:

Չերմս վրայ հասաւ, գրիչս ձեռքէս
կ'իյնայ, չեմ կրնար երկընցընել: Փաւա-
տինա քեզի բարեւ կ'ընէ, խիստ տրտ-
մած է կորստեանդ վրայ: Հրամանագիր
խրկեցի որ քեզի նաւ մը տան, չըլլայ
թէ խելքդ կորսընցընես: Աղեքսանդրիա
երթալու որ ըլլաս, Հոռոդոս մի հանդի-
պիր, աւազակներու ձեռք կ'իյնաս: Դիք
քեզի պահապան ըլլան. քեզի ալ՝ մեզի
ալ բարի կեանք տան մերայնոց հետ, ու
օտարաց առջին ալ բարի համբաւ:

Նեապոլսոյ մէջ 1343 նոյեմբերի 26ին
հանդիպած փոքրորիկը.

Որատիոս ուզելով մեծ մրրիկ մը
ստորագրել, բանաստեղծական էր ը-
սաւ. ինծի կ'երևայ որ ասկէ աւելի հա-
մառօտ կերպով չէր կրնար անոր ահա-
ւորութիւնը բացայայտել: Վասն զի ոչ
զայրագին երկինք մը, ոչ մրրկայոյզ

ծով մը կրնան հաւասարիլ և կամ ան-
կարող ընել բանաստեղծից գրիչները:
Այս ըսածիս ճշմարտութիւնը՝ Հոմերոս
սին կաբարեսոյ փոթորկին վրայ ըրած
ստորագրութեամբն ալ կը ստուգուի:
Սակայն ոչ վրձինով կը նկարուի, ոչ
խօսքով կը ստորագրուի երէկուան իմ
տեսածս: Պատահար անմահ, և աշ-
խարհիս վրայ չսուած դէպք: Ո՛ր կը
մնայ Հոմերոսի ստորագրած Յունաս-
տանի մրրիկը, Վիրգիլիոսին Սիկիլիոյ
այլեկոծութիւնը, և Լուկանոսին Եպիւ-
րոսեան փոթորիկը: Եթէ ժամանա-
կըս ներելու ըլլայ, իմ գրիչս մեծ
նիւթ պիտի ըլլայ Նէապոլսոյ այս
զարհուրելի փոթորիկը, զոր ես ա-
ւելի Նէապոլսական կը համարիմ, թէ-
պէտ և ընդհանուր բոլոր Տիւրինեան և
Ադրիական ծովուն վրայ հանդիպած
կը սեպուի: Սակայն եթէ ժամանակին
սղութեմբ պատճառաւ չկարենամ ստո-
րագրել զայն ըստ բաւականին, կրնաք
դուք ապահով ըլլալ որ ասկէ աւելի
սոսկալի պատահար բնաւ չէ լսուած:
— Այս աստուածային պատուհասը օ-
րերով առաջ մերձակայ կղզեկի մը ե-
պիսկոպոսը աստեղագիտութեամբ գու-
շակած էր. բայց ինչպէս շատ անգամ
կը պատահի որ աստեղագէտը ոչ եր-
բէք ճշմարտութեան մը ամենայն մա-
սամբ խելամուռ կրնան ըլլալ, այս ե-
պիսկոպոսն ալ մեծ երկրաշարժ մը մի-
այն գուշակեց որ պիտի ըլլայ նոյեմբեր
ամսուն քսան և հինգերորդ օրը, որուն
ցնցմամբը բոլոր Նէապոլիս համայնա-
ջինջ պիտի ըլլայ: Այս իր գուշակու-
թեանը շատերը հաւատացին, որով և
ժողովրդեան մեծ մասը ուրիշ մտած-
մունք մէկդի թողած, աստուածային
արդարութենէն իրենց մեղացը թողու-
թիւն կը խնդրէին, իբր թէ ստուգիւ
մահուան դուռը հասած ըլլային: Շա-
տերն ալ բանի տեղ չդնելով՝ կը ծիծա-
ղէին այս նախագուշակութեան վրայ,
ըսելով թէ աստեղագիտաց վրայ պէտք
չէ մեծ հաւատք ունենալ, մանաւանդ
երբ քանի մ'օր առաջ այլ և այլ եր-
կրաշարժներ պատահած ըլլան: Իսկ

ես, վախի աւելի քան թէ յուսոյ մէջ տատանելով, ամառոյ քանն և չորրորդ իրիկունը, երբ արեգակը դեռ չէր մըտած, իմ բնակարանս քաշուեցայ. ուսկից կը դիտէի քաղքիս մէջ գետնուած կանանց մեծազոյն մասը որոնք աւելի վտանգը յիշելով քան թէ ամթիւնը, բոկոտն և հերարձակ, իրենց տըղաքը գրկեմնին առած, եկեղեցեաց այցելութեան կ'երթային, և արտասուգը Աստուծոյ գլխութիւնը կը խնդրէին: Վերջապէս գիշերը հասաւ, և երկինքը քան զսովորականը պարզ էր. իմ ծառայներս ընթրիքը ընելէն վերջը մէկէն պառկելու գնացին, իսկ ես սպասեցի, որպէս զի լուսնին մուտքը տեսնեմ, որոյ կարծեմ եթէնքորդ օրն էր. ուստի պատուհանս բանալով, որ դէպ 'ի արևմուտք կը նայէր, տեսայ որ կէս գիշերէն առաջ սրբոյն Մարտինոսի լեռան ետևը սև սև ամպերու մէջ ծածկուեցաւ. ան միջոցին պատուհանս գոցելով պառկեցայ անկողնիս վրայ, և բաւական ժամանակ արթուն կենալէն ետք՝ հազիւ թէ սկսեր էի քուն ըլլալ, մէյ մ'ալ զարհուրելի աղաղակ մը և երկրաշարժ մը արթնցուց զիս որ երկիրը ցնցելով ոչ միայն պատուհաններս բացաւ և ճրագս մարեց, զոր գիշերը սովորութիւն ունէի միշտ վառ պահելու, այլ կեցած սենեակս 'ի հիմանց ցնցեց, որով և քնոյ տեղ՝ վերահաս մահուան երկիւղովը լեցուած՝ խուցէս դուրս ելայ վաճառի սրահը ուր կը բնակէի, և մինչդեռ մթութեան մէջ մէկզմէկ կը բնուէին, հազիւ թէ քանի մը կանթեղաց լուսովը գտանք զիրար, և սիրտ տալով սկսանք քաջալերել մէկզմէկ: Վաճառի միանձուկը վաճառորը հետ մէկտեղ որ սրբակեաց մարդ մ'էր, եկեղեցին ժողուած առաւօտեան ժամս կարգութիւնը կ'ընէին. զարհուրած այս ահագին փոթորիկէն՝ խաչերը և սրբոց նշխարքը ձեռքերնին առած, չեւեռանդ աղօթիւք և արտասուելով՝ եկան քովս ժողուեցան շատ մը բորբոքած ջահերով, զոր տեսնալով քիչ մը սիրտ առի և իրենց հետ մէկտեղ ե.

կեղեցին դացինք. ուր ամենքնիս ծունկ չդրած՝ Աստուծոյ ողորմութիւնը կը խնդրէինք, ժամ առ ժամ սպասելով, թէ երբ արդեօք եկեղեցին վրանիս պիտի խնայ. — Պատմութիւնս շատ կ'երկրնար թէ որ այն դժոխային գիշերուան ահ ու դողը մանրամասն պատմել ուղենայի, որով թերևս չափազանցութիւն րրած սեպուէի. թէպէտ և պատահած փոթորիկը իմ ստորագրութեան անհամեմատ մեծ էր: Ինչ ջրի հեղեղներ, ինչպիսի հողմուճք, ինչ շառաչմունքներ և սոսկալի երկնքի որոտմունքներ և ինչպիսի անըմբռնելի երկրաշարժ. ուր մնաց ծովուն ահեղ գոռալը այն յուսահատ ձայներուն դիմաց որ առհասարակ խեղճ ժողովրդեան բերնէն կը լսուէին, և մեծ տագնապէն գիշերն ալ իրենց երկնցած կ'երևար: Վերջապէս արշալոյսը ծագեց, և քահանայք պատրաստուեցան իրենց պատարագը մատուցանելու. իսկ մենք, որ մինչև ցայնժամ չէինք համարձակէր աչքերնիս երկինք վերցնել, և գետին նայելով, միշտ կուլայինք ու կ'աղօթէինք, երբ առաւօտ եղաւ (թէպէտ և այնպէս մութ էր որ գիշերուընէ չէր զանազանուեր), կամաց կամաց քաղքին վերի կողմերը սկսաւ դադրիլ ժողովրդեան աղաղակը, և դէպ 'ի ծովեզերքը սկսաւ աճիլ: Զիբրու ոտքի ձայներ կը լսուէին, առանց պատճառը իմանալու: Վերջապէս յուսահատութիւն յանդգնութեան փոխուելով, հեծայ ձիուս վրայ և մահը աչքս առած սկսայ դէպ 'ի ծովեզերքը երթալ աղաղակին պատճառը իմանալու համար: — Ո՛վ ամենակարող Աստուած, երբ լսուեր է այսպիսի պատահար: Ծերացեալ նաւաստիք կը վկայէին, թէ ոչ լսեր էին այսպիսի ծովու արեկծութիւն և ոչ տեսեր: Նաւահանգստին մէջ ծովուն վրայ անթիւ բազմութիւն կը տեսնուէր, որոնք հազիւ թէ ցամաք մօտենալով քիչ մը սիրտ կ'առնուին, մէյ մ'ալ ծովուն կատաղութիւնը այնպէս անգութ կերպով կը տանէր կը զարնէր զիրենք նաւահանգստին մէկ կողմը, ուր ամեն.

քը մէյմէկ հաւկթի պէս կը ջախջախէին: Լցուած էր այն տեղը խեղդուած մարդիկներու դիակներով, և դեռ ուրիշ շատերն ալ խեղդուելու վտանգի մէջ էին. որուն գլուխը ջախջախած, որուն թևերը կոտրած և շատերու ալ աղիքը դուրս թափած: Ծովուն գոշումէն ոչ ինչ նուազ էր արանց և կանանց զարհուրագին ողբաձայնութիւն. ներք՝ որոնք ծովուն մօտերը կը բնակէին: Եւ ուր որ նախընթաց օրը փառաւոր ճեմելեաց տեղ էր, հիմա Մեսիհայի նեղուցէն աւելի վտանգալից անցք մը և կատաղի Ովկիանոս մը դարձած էր: Հազարաւոր Նէապոլիցի ազնուականներ ձիու վրայ հեծած հոն եկեր դիզուէր էին իրենց հայրենեաց վերջին յուղարկաւորութենէն ներկայ գլուխու համար, որոնց խմբին հետ ես ալ միացած՝ սկսայ աւելի ևս քաջալերել զիս, գոնէ անոնց հետ մեռնելու յուսով: Բայց յանկարծակի մեծ խուժովութիւն մը ծագեցաւ, վասն զի երկիրը, որուն վրայ կեցեր էինք, սկսաւ կամաց կամաց խորասոյգ ըլլալով, ծովուն տակը մոռնել: Մենք, փախանք անկէ, և բարձր դիրքեր քաշուեցանք: Եւ յիշաւի տարօրինակ բան մ'էր այս սոսկալի պատիժը մարդկան վրայ. զերկինքը այնպէս բարկացած տեսնել, և զծովը այնպէս անգութ զազան մը դարձած. լերան պէս հազարաւոր ալիքներ, ոչ սև ոչ կապոյտ, ինչպէս ուրիշ ալեկոծութեանց ատեն կը պատահէր, այլ բոլորովին ճերմակ, որ կարծես թէ Գաբրայի կղզիէն դէպ 'ի Նէապոլիս կու գային: Կղզւոյն թագուհին, որ դեռ երիտասարդ էր. բոկոտն, և կանանց մեծ խումբ մը հետը առած Ս. Աստուածածնայ ընծայուած եկեղեցեաց այցելութեան կ'երթար: — Նաւահանգստին մէջի գտնուած նաւերէն և ոչ մէկը կորցաւ ազատիլ, և երեք հատ մեծամեծ նաւեր, որոնք Կիպրոսէն եկած էին այնչափ ծովը անցնելով, առաւօտը երբ ճամբայ պիտի ելլէին, ամենքն ալ դրժբաղդութեամբ ընկղմեցան, որոնց մէջէն և ոչ մէկ հոգի մը կրցաւ ազատիլ:

Նմանապէս ուրիշ մեծամեծ նաւեր, որոնք նաւահանգստին մէջ խարխիս ձըգած կեցեր էին, մէկմէկու զարնուելով, ջաղջախեցան բոլոր մէջի գտնուած նաւաստեօք հանգերձ: Այնչափ բազմաթիւ նաւերէն մէկ մը միայն կրցաւ ազատիլ վտանգէն, որուն մէջ չորեք հարիւր չարագործ անձինք կային, յաքսորս դատապարտուած՝ որ Սիկիլիոյ պատերազմին համար կ'աշխատէին. ասոնք մինչև 'ի յետին շունչ ծովուն կատաղութենէր դէմ դնելով, նաւուն հետ մէկ տեղ կեանքերնին ալ ազատեցին, որով հետևեալ կամաց կամաց երկինքը սկսաւ պարզուիլ, և ովկիանոսին կատաղութիւնը իջնալ, այն միջոցին՝ երբ գողերն ալ բոլորովին ուժէ ընկած էին: Եւ ահա այս կերպով այնչափ խուռն բազմութեան նաւերու մէջէն, ամենէն չարագործները միայն ապրեցան՝ որով և լուկանոս քերթողին ըսածը կարծես թէ ստուգուեցաւ, թէ՛ կամ բախտը աջակից է չարագործաց, և կամ թէ Աստուած այնպէս ուզեց. և կամ, անոնք աւելի ապահով են վտանգայ մէջ, որոնք իրենց կեանքը ոչինչ կը համարին:

ԲԵՐԴՍՐՈՒՍ

ԹՂԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Պատմական տեղեկութիւնք. — Բամբակէ և ետքն ալ կտաւէ թուղթ շինելու գիտը նախ Եւրոպիոյ արևմտեան հարաւային կողմը մտաւ, այսինքն 'ի Սպանիա և 'ի Սիկիլիա, արաբացւոց ձեռքով. իսկ Եւրոպիոյ արևելեան հարաւային կողմը մտաւ խաչակրաց ձեռքով: Ուրեմն Ասիայէն Եւրոպա եկաւ թղթագործութեան արուեստը, որ արդէն Բրիտանոսէ ետքը երկրորդ դարուն մէջ գտնուած էր 'ի Ճենաստան, ուր թղթոյ թերթերը կը շինէին պամպուրուած ծառին կեղւններէն, կանեփի և